Առավտուն պարիկըս կպայտի վեր ջաղամաթին, վեր թաքավուրու ախչկան, էլմել թռփեր կթալեն, թվայներ կթալեն, ախչիկ կնստի ուր ֆայթոն, ճըռվըռալեն կէրթա վեր մոր գյերեզմընին: Տյուռ կպանա, կմտնի ներս, կտիսնա որ էլըմ տղեն պառկուկ էնտեղ: Կասի. «Տեր աստված, էսա պառավ վեր զիկ կծծղա, ես ի՞նչ պան ի, թե քյնու՞կ ի, ինչի՞ չարթընա: Թե մեռել ի, ապա էսա ի՞նչ նաֆաս ի կէլնի»: Թե պռոտ կօլորի, թե քյիթ կճխթի, թե կկըճմտի, ինչ որ կանի՝ ճար չէլնի: Կխանի կայնըյուպի, կտնի գյետին, թըրըփալեն էլմել կինի տակ, էսօրն ի մեռի, թե իսա յոթն օրն ի:

Ախչիյն կտիսնա, որ էլ ճար չկա, կպիրի էրկու խապ ճան կթալի լաճու ջյոբ, կթռնի կէրթա:

Լաճ կմնա էնտեղ քյնուկ չյում իրիկուն: Մեկել կարթընա, կտիսնա, որ նա ախչիյ կա, նա էլ ծեն-ծուն, ինքյ մեչ խռղեկայ փալըլուկ: Կասի. «Վալլա՛հ, պառավ զի կխափի, որ թռփ կթալեն, թվանքյ կթալեն, ապա ինչի՞ ծեն ես չեմ լսե»:

Կէլնի աջալա, կէրթա տուն, թուր կքյաշի, կասի. - Էյ գիտի պառավ կանջը՛ղ, խերիքյ չի՞ իմ վերեն ծըծղաս, էսօրն էլ խռ ես չի քյնե:

Ջրոն կէլնի, տիմաց կկըտրի, կասի. - Շահզադա, ես եմ տիսե, որ

թոփեր կթալին, թվայըներ կթալեն, ծիյավորներ կխաղին, ախչիյ ֆայթոնով էկավ, ես իմ աչքով տեսա, որ տյուռն իպայ, մտավ ներս: Տյու էլըմ քյներ ես, որ չես իմյե: Մեյ խապ ջյոբերտ աչքի, էն թաքավուրու ախչիկ ի, հյունարով ի, ինչ կանդար չէլնի մկա նշանըմ թ:ղեր ի մռ քյե:

Թաքավուրու լաճ ջյոբեր կաչքի, կտիսնա՝ էրկու խապ ճան մեչ ջյոբին: Կխանի տյուս, կասի. - Խա, տյուքյ էքյ թսղե:

Ջբոն կասի. - Մենքյ չենքյ թսղե, ախչիկն ի թսղե մեչ քյո ջյոբին: Կնշանակի թե տյու տղա ես, չես կանա զինք փախցույե, կնա ճան խաղա:

Թաքավուրու լաճ որ կլսի՝ շատ կամչընա, կասի. - Ամա՞ն պառա՛վ, տյու կիտես մեկել կնա, բալքյի ճար մ'անես, վալա կիտի էլ ըսկուն չեմ անի:

Պառավ կասի. - Խազար էլնի էլ չեմ կանա էրթա, ըստրիս որ կնայի, իմ վիզ կուտա կտրել:

Ջբոն կասի. - Պառա՛վ, պան չկա, էլի, մեկել կնա, ամա թե որ կանաս ըսկուն արա, որ ես էլ էրթամ խետ, ես չէլնեմ՝ ճար չէլնի:

Պառավ կէլնի նազ-տուզ անելեն, տըքյտըքալեն, պըտպըտալեն կէրթա մոտ ախչիկ:

Ախչիկ որ կտիսնա էլըմ պառավ, կասի. - Պառավ, էսա ի՞նչ օյին ի տյու կխանես: Էրկու օր ի որ կէրթամ դա, կտիսնամ որ ջանդակ ինզյուկ ի, չեմ կիտե՝ սաղ ի, թե մեռուկ: Տյու աստված կսիրես, զի մի խափե՝ թե մեռեր ի, զիկ ասա, թե սաղ ի՝ ապա ինչի՞ չա̈րթըննա, օյին չմնայ, որ չեմ խանե գյլոխ, ճար չէլնի:

Պառավ կասի. - Փա̈րիզա̈դա̈, զյխուտ մեռնեմ, չէ՞ էն էլ թաքավուրու մ' տղա յի, քյե պես նազիքյ ապրե, արև աբիզյա̈կան տակ չի ֆռայե, նեղութեն-ջաֆա̈ չի տիսե, ինոր խամար: Մկա որ իկե մեր տուն, ես խորոտ, նազիքյ կշախեմ, ինքյն էլ նոր բաշլայե ըղհա̈թել: Համան ինոր խետ մեկ ջհելըմ կա, որ չուտես, չխմես, թամաշա անես: Ըսկուն կտրիճ, ըսկուն աճկապա̈յ ի, որ էլ մի ասե: Թե էն ջհել ծեր դա̈րդին դա̈րման չանի, էլ մարթ չկանա:

Ախչիյ կասի. - Դե որ ըսկուն ի, էն էլ իմ ախպերն ի, ասա, որ առատուն էն էլ գյա̈ խետ, բալքյի ճար մ'անի:

Պառավ կէլնի ուրախ-ուրախ կուգյա̈ տուն: Կասի. - Ջբո, իզին եմ առե, որ առատուն տյու էլ էրթա̈ս խետ Շաեզա̈դին:

Ջբոն կուրախնա, կասի. - Որ ըսկուն ի, մեյ գյլոխ սխտոր պե զիկ, մեկ ուսթուրա կտոր մ'աղ, մեկել չախու:

Պառավ բիթյուն կպիրի, կուտա Ջբոյին:

Ջբոն սխտոր կթըփի, աղ կլցի մեչ, կփաթյութի մեչ թըխթին, կդնի ուր ծոց:

Իրիկուն խայ-մայ կուտեն, տեղ կիսկեն, պառավ ինան Ջբոն կպառկեն, Շահզադեն կէլնի, էլմել փոոթալամիշ կէլնի, ինչ որ կանեն, չի գյա քյնի: Չյում աղոթըրնին, կուգյա Ջբոյին ծեն կուտա, կասի. - Էլի էրթանքյ:

Ջբոն կառնի ուր ծեծած սխտոր, ուսթուրեն ինան չախուն, Շահզադի խետ մեյտեղ կէրթան ախչկան մոր գյերեզմընի վերվի օղի տյուռ կպանան, կմտնեն ներս, տյուռ կշինեն, կնստեն էնտեղ:

Ջբոն կիրիշկա, որ Շահզադի քյուն էլմել պիտի տանի, կասի. - Շահզադա՛, մեյ խապ ծեռ տուր զիկ:

Շահզադեն խե ծեռ տալուն, Ջբոն չախուն կթալի, չկոթի ծեր կճղի:

Թաքավորի տղեն կասի. - Ու՜ֆ, ի՞նչ արիր:

Կասի. - Պան չկա, կայնի տեղ անեմ, ես չկիտյսւ, չախուն խըշթվավ:

Էտա սխտորն ինան աղն կճխթի․՝մեչ՝ մատի ճղածին: Մատ կբաշլայի մըռմըռաղ:

Շահզադեն մատի ցավին չի դիմանա, կասի. - Քյո տուն ավիրի, Ջբո, տյու զի դյուշմա՞ն իր, զի կսպանիր՝ թո իմ խոր տան մեչ սպանիր, ըստեղ սպանիցիր, որ իմ նշանած տյո՞ւ առնես:

Ջբոն կասի. - Ջանըմ, պան չկա, մեյ տոր դիմացի:

Շահզադեն կէլնի մեչ էտա օղին մըռմըռալեն, լսլելեն ման կուգյա:

Մեկ էլ բիրդան, բո՜մ, բո՜մ, թոփեր կթալեն, կըփկըփալեն թվայինեբ կթալեն, Շահզադեն կփախնի, կկպնի Ջբոյի կուշտ: Կասի. - Տնավեր, իմցան մենք իկիր ենք էսա տեղ, մե պաշարեցին, էլ ի՞նչխ անենք:

Ջբոն կասի. - Մի վախենա՛, էսօր իրեքյ օր ի որ ըսկընա յի, մկա ախչիյ կուգյա:

Մեկել բիրդան տյուռ կպանան, ախչիյ կմտնի ներս:

Ջբոն աբեն կքյաշի ուր գյլոխ, կկըծկվի պուճախ: Շահզադեն ինան ախչիկ մե մեկելի որ կտիսնան, կփաթյութվեն իրար, կինեն վեր մոր գյերեզմընին, ալ շաֆթալի, վեր շաֆթալի, մե մեկելու էն կանդար կպաքյեն, որ էլ մեռոն չի մնա իրիսներ:

Ջբոն կտիսնա, որ անգյանցուն, կասի. -Ջանըմ, ըսկընա չէլնի, էլեքյ նստեքյ, խելքյ մտածենքյ, խենքյ ի՞նչխ անենքյ:

Փարիզադեն կասի. - Ջբո, տյու մե կտիսնաս մեր ծեռնեն պան չի գյա: Թե ճար մ'անես, տյու անես, տյու քյո կաթ, մենք՝ մեր:

Ջբոն կտիսնա, որ բոշ ի, ուսթուրեն կխանի, ուր բեխեր կթրաշի, ընքյվեր կշինի, ախչկան խալըվներ կխանի, ինքյ կխայնի, ուր խալվըներ կուտա ախչկան, կասի. - Խանը՛մ, քյո կառավաշնեկույ անույըտերն ի՞նչ են:

Կասի. - Մեկում Մարան, մեկում Արմաղան: Արմաղան ոտքերս կմաժի, տեղս կիսկի, Մարան կայիֆա կուտա, խայ-մայ կտնի:

Ջրոն կասի. - Շատ աղեկ, դե՛ տյուրքյ իմ էրթալույ սորա կնույեքյ պառվու տուն, չյում քյառսուն օր զիկ աչքեյք, թե չէկա՝ ծեր գյլխու ճարն արեքյ:

Ախչիկ շատ կուրախանա, կպռնի Ջրոյին էրկու աչքեր կպաքյի, կասի. - Էրթաս պարի, աստված խե քյե, քյառսուն օր չէ, քյառսուն տարի էլ որ չիգյաս, առանց քյե տեղ չեմ էրթա:

Ջրոն կէլնի տյուս, կմտնի ֆայթոն, յալահ, կքշեն, կտանեն դոռըի Բաղդադու քյաղաքյ:

Շահզադեն հնան ախչիկ կէրթան պառվու տուն, օրեր կխամրեն: Ինոնք թող օրեր խամրեն, մենք գյանք դեխ Ջրոն, խենքյ դո՞ր կէրթա:

* * *

Ջրոն որ կտնեն ֆայթոն, տյու մի ասե Բաղդադու քյաղքյի խարսնըսի կայդեն էն ի, որ խարս որ պիրեն՝ փեսի քյոր պիտի նստի խե կշտին, չյում ութ օր՝ նոր տանեն փսակեն, թալիմ անեն փեսին:

Բաղդադու թաքավուրուն էլ տասնըվեյ տարեկան մեկ քյոր կեր: Էտա ախչիկն են արե փեսի քյոր. մեչ ֆայթոնին նստե Ջրոյի կուշտ:

Քիչ կէրթան, շատ մի կէրթան, Ջրոն կըոռա. - Մարա՛ն:

Մարան կայըեֆեն ծեռ կմտնի ներս: Թե որ խանըմ մեկ ֆինջան կայըեֆեն տըսվերկու ուդում կխմեր, Ջրոն՝ էրկու: Մարան կտխսնա, կզարմանա:

Ջրոն էլմէլ կըոռա. - Արմաղա՛ն:

Արմաղան կուգյա կբաշլայի ոտքեր մաժել: Կտխսնա որ խանըմի ոտքեր խաստայիր են: Կզարմանա, ծըծըղկըրտալեն կէրթա մո Մարան, կբաշլայեն քըսփըստան: Ջրոն կիմնա իտոնց միտք, կկանչի, կասի. - Ծեր սիրտ խորեմ, ի՞նչ կքըսփըստաքյ, մայյար ես էլ փարդի իւրնն եմ, զեեիրս ծեռս՝ խալվեմ, մաշվեմ: Էսօր թազա խարս եմ, ալբաթ իշթախս էլ կպայվի, ոտքերս էլ կխաստըանա:

Վարհասըլ, ինչ գյլոխ ցավկըլյեմ, Ջրոն խե խարսի քյուրոջ մեչ ֆայթոնին էն կանդար կսիրվեն վեր մեյ մեկելի, որ էլ մ'ասե: Վարհասըլի, շատ մի կէրթան, քիչ մի կէրթան, չյում կխասնեն Բաղդադու քյաղաքյ: Խարս թալիմ կանեն խարսընքյրոջ, որ ութ օրից սորա գյան տանեն:

Ջրոն ու խարսնքյոր կէրթան խարսընքյուրոջ տուն: Մեկ, էրկու օր

վերեն կընցնի, մեկ իրիկուն խարսընքյոր կասի. - Ա՞խ խարսիկ, քյաշկե երկըսիսյս մեկս լաճ էլնենքյ մե մեկ առնինքյ:

Ջբոն կասի. - Քյա՛, դե սուս կայ, ես խարս եմ, որ էլա լաճ, յան պյու էլար լաճ, ապա ախպե՞րպ, մե կուպա թոփի պերան:

Ախչիկ կասի. - Ա՞խ, թող մե երկըսիսյս մեկս լաճ էլնենքյ, ես ախպորս ճար կմտածի:

Ջբոն կասի. - Որ ըպըսկնա յի, մեր երկիր որ մեյ մաքթու լաճ չէլներ՝ մեյ պեսակ պեղըմ կեր, կպիբին կուպին ախչկընեկսյ, ախչկըներ կքսին ուրենց պանի վերեն, քյառսուն ծունդր աղոթք կանին, զապ կպյուսեր: Չեմ կիպի են թոզիս մոպս մնացեր ի՞ թե՝ չէ: Դե պյու էլի կնա անուշ կայիֆե մ'պե խմենքյ, ես աչքեմ պեսնանքյ են թոզիս կա՞, բալքյիմ' կընդնեմ:

Ախչիկ կնայ կայիֆա իփել: Ջբոն շոպըմ մեյ կպոր թոզ լցեց մեչ թըղթին, հուզըրեց:

Ախչիկ կայիֆեն իպե, խման պոծան, Ջբոն թոզն իխան, կխսեց, ախչկան ասայ. - Առա՛, կես քյե, կես զիկ: Տինանքյ ասպված վուրուն զապ կուպա:

Ջբոն ինան ախչիկ առին թոզեր, էլան կայնան դէխ աղոթրան, բաշլայիցին ուրենց աղոթք կենալ, պաս ծունդր աղոթք արին:

Ջբոն ասայ. - Ախչիկ, աչքի խենքյ քյոն ի՞նչխ ի:

Ախչիյն ասայ. - Իմն էլմ են ի:

Ջբոն ասայ: - Իմն մեկ կպոր ըսկուն ի՞նչ պաքուցեր ի:

Ախչիյն կասի. - Աման, էկել մեյ խապ փխնա՞մ:

Ջբոն կասի. - Աման, ծեռ մի պա՛, պըլըմ կավիրի: Աղոթք արա՛, չյում թըմըմի:

.Էլ մ'էլ բաշլայիցին աղոթք անել: Եոսուն ծունր աղոթք արին:

Ջբոն ասայ. - Աչքի փխնամ՝ քյոն ի՞նչխ ի:

Ախչիյն աչքեց, ասայ. - Ա՜հ, էլմ են վասն ի:

Ջբոն ասայ. - Իմն էլավ չանգյ մեյ փըշապ:

Ախչիյն ասայ. - Ասպած սիրես, մեյ խապ փխնամ:

Ջբոն ասայ. - Յա՛, դե մ'անի, առրա պըլըմ կավիրի, աղոթք արա չյում թըմըմի:

Աղոթք արին, չյում քյառսուն ծունդր թըմըմավ, Ջբոն ասայ. - Աչքի փխնա՞մ, խո քյե չկա:

Ախչիյն աչքեց, ասայ. - Հա էլմ են վառն ի, ինչ զյո՝ դա ի:

Ախչիյն ասայ. - Քյո՞ն ինչխ էլավ:

Ջբոն ասայ. - Ուզածիպ պես, թըմըմեր ի, առա փխսի:

Իպուր ախչկան ծեռ, ինզյան մեյ մեկ, ալ շաֆթալի վեր շաֆթալի, ուրենց յոթ սըսլի դարդեր խռվցուցին: Շամաթյա քալասին, վայ-վայ թարլասին, կըռվըցուցին, խասան ուրենց մուրազին:

Վարհասըլի, մնաց չյում ութ օր թըմըմավ: Էկան խարս պիտի տանեն, փսակեն:

Ջբոն ասաց թաքավորու քյուրոչ. - Ապա ես ի՞նչխ անեմ, ախպորտ ի՞նչ ջույաբ տամ:

Ախչիյն ասաց. - Մառախ մ'անե, ա՛ռ էսա թուր, փիր քյո ֆըսթընի տակ, կնա փսակ: Իրիկուն որ քյե կտանեն ախպորս մոտ, ախպորս կսյդեն էն ի՝ արաղ շատ կխմի: Որ կուգյա մո քյե, արաղի շուշեն կխանես, ինչ որ կանի՝ տյու չխմես, չյում էն կսարխոշանա, կինի կպառկի, տյու էլի պլռնի խեխթի, ես էլ կէրթա̈մ էրկու ծի կհա̈զըրեմ, արփշըմե չվան կպիրեմ կկապեմ ախպորս փենջա̈րեն, էրկու ա̈յքա կտանեմ ախպորս օդեն, խալիքյթեկաց տակ կպախեմ, էրկու ա̈յքեն կառնես, ախպորս սընդկըներ կպանաս, մեյն ոսկի, մեյն ակնունքյ կլցես, փենջա̈րից կթալես տակ, տյու էլ կէճնես, կխեզնենք ծիյանք, յահու յալըահ, կփախնենք կէրթանք:

Ջբոն առեց թուր, կապեց ֆըսթընի տակ, տարան փսակեցին, ուռց կըլպրեցին, խարս-փեսեն տարան մեյտեղ:

Թաքավոր խետ տեսավ Ջբոյի զանանութեն, խորոտկութեն, ինքյն դոխսան տարեկան անատամ գյել, նստավ խե կշտին, խանեց արաղի շուշեն, մեյ խատ լցեց՝ ինքյն խմավ, մեկել լցեց՝ պարզեց դեխ Ջբոն: Ջբոն նազ անելեն իրես տառցուց էն դեխ: Թաքավոր պա̈րկացավ, մեյ սիլա̈ խասուց մեչ Ջբոյի իրիսին:

Ջբոն պա̈րկացավ, էլ ակա-մակա չաչքեց, թըռավ կայնավ, ֆըսթնի տկեն թուր քյա̈շեց մեյ խատ մեչ թաքավուրու գյլխուն: Թաքավուրու գյլոխն արաց իրեյ կտոր, ինգյա̈վ դա մեռավ:

Ջբոն շոտըմ խալիի տկեն ա̈յքեքյ իխան, թաքավուրու սընդկըներ կոտըռտեց, մեկ ա̈յքեն ոսկի իլից, մեկն ակնունքյ-ջավահիլ, փենջա̈րեն իպա̈ց, տեսավ որ թաքավուրու քյոր ծիյանքյն էնտեղ հա̈զրեր ի: Չվան թա̈լե, փենջա̈րից կապեր ի, ա̈յքեքյ թա̈լից տակ, ինքյն էլ չվան պըռնեց, շոտըմ էճավ տակ, այքեքյ կապեցին ուրենց թաքքյըներ, խեծան ծիյանքյ, յահու-յալլահ, ինգյան ճա̈մբա̈խ:

Շատ մի էկան, քիչ մի էկան, դա̈քա̈-թա̈փա̈, դյյում-դյյուզ էկան: Չեռլ ու չիման տա̀շտեր ընցան, անվերի-վերի սարերն ընցան, չյում էկան խասան պառվու տռան վերեն:

Ջբոն ասաց. - Տյու ծիյանքյ պըռնի, ես մեյ խատ էլնեմ պառվու տանիս, տիսնամ վո՞վ կա:

Ջբոն էլա̈վ պառվու տանիս, տեսավ Շահզադեն խետ ուր կնգյան նստիր են:

Շահզադեն ասաց. - Եռսունևին օր թըմմեր ի, մնաց մեկ օր էլ կաչքեմ, Ջբոն որ չէկավ կէլնենքյ կէրթանքյ:

Փա̈րիզադեն ասաց. - Մեկ օր չէ, տաս տարի էլ որ էլնի՝ չյում Ջբոն չիգյա̈, ես տեղ էրթացող չեմ:

Ջբոն էրփըսից ասաց. - Ես իկիր եմ, էլեք փյուռ պայեք:

Ջբոն փանսից էճավ, փյուռ պսւյին, խեփ ուր կնգյան որ մփավ ներս, Շահզադեն, ուր կնիկ շափ ուրախյան, նոր նսփան ուրենց գյլխու գյայած՝ Բաղդադու քյաղքյի քյուրոչ պափմեյին, ինչ էլնել խասկըցուցին:

Բաղդադու թաքավորի քյոր որ լսավ, ուրախյավ, էլավ Ջբոյի գյլոխ պաքյեց, ուր փեսայու կաբյուլ արաց, կերան-խման շափ ուրախութեն արիցին: Առափուն էլան, պառվուն կայ պարով արին, ուրենց ճամխի պաշար վերուցին, ծիյանքյ խեծան, ինգյան ճամբախ:

Շափ մի էկան, քիչ մի էկան, չյում խասան Սե ծովու քյանար: Ջբոն կնաց էն մարմար քյար շուռ իրուր: Չորս գյամն էլ խանեց, իպե իրեյ փիր ասփծու անուն իփուր, զարկեց մեչ ծովուն: Ծովու մեչեն չորս խափ խըեղեն ծի էկան, ծիյանքյ պռնեցին, գյամեր զարկիցին մեյ-մեկ, մեյ խափ խեծան, ինգյան վեր ծովուն, կնուցին չյում էմեկել իրիս, էլան փյուս:

Ջբոն ասաց. - Դե՛ էճեքյ փակ, ծիյանքյ թողնենք:

Շահզադեն ասաց. - Էփա խելաց պան ի՞, ըսկընա ծի էլ ես որփեղե՞ն ճարեմ: Ինչ որ էլնի, չեմ թողնի, կփանեմ զիկ:

Ջբոն ասաց. - Ջանըմ, գյոզըմ, էսոնքյ անփեր չեն, ըսոնց փեր կա, մենքյ չենքյ կանա փանե:

Ինչ որ արաց, ճար չէլավ, չյուր փսւրիզադեն նեղացավ վեր Շահզադին, ասաց. - Որ փյու մարթ էլնիս, խազար ըսկընա ծի էլ էլնի, Ջբոյի խաթըր չես կոփրի:

Վարիասըլ, էճսւն փայ ծիյափեկաց, գյամեր խանեցին, ծիյանքյ էլըմ թողեցին պայ, գյամեր Ջբոն փարավ, էլըմ փրեց մարմար քյարի փակ, խեծան ուրենց ծիյանք, ինգյան ճամբախ:

Շափ մ'էկան, քիչ մ'էկան, չյում խասան էն խաբաբա փներ, որ առաճ մեյ կիշեր մնայեր ին: Շահզադեն առեց էրկու խանըմներ, կնաց ներս:

Ջբոն ծիյանքյ փարավ կապեց արածըլ, փառյավ էկավ ներս: Խաց-մաց կերան, չայ-կայիֆեն խման, փեղըրայք իսկիցին, Շահզադեն խեփ ուր խանըմին էլան պառկան:

Ջբոն ուր կնգյան ասաց. - Դե փյու պառկի, ես կայնեմ նոբաթի, չէլնի փորձանքյըմ պափահի:

Կնիյ պառկավ, Ջբոն կայնավ վեր փըռան: Սահաթ մ՛ էրկու ընցավ, մեկ էլ փեսավ որ էլմել կամշընեկաց մեչեն խըշխըշոցի ծեն էկավ: Ջբոն էլմել յավաշըմ կնաց, մփավ մեչ կամշընեկաց, փեսավ որ ի՞նչ. Խըդըր, Նաբին խավքյու կայդա նսփիր են վեր կամշընեկաց:

Նաբին խառյուց, ասաց. - Խըդը՛ր, էն ի՞նչ մարթ են, պառկիր են էսա փան մեչ:

Խըղըըն ասայ. - Հե՜յ, փնավեր քյնուկ, էսա Կանդահարա թաքավուրու լաճն ի, որ կնայ Հընդըյամանա թաքավուրու ախչիյն առեյ, Ջբոն էլ կնայ Բաղդադու թաքավուրու քյորն իպե, էսա ինդհնէն է, չե՞ս կիփե:

Նուբին ասայ. - Ավա՜ր, կիյա, ամա՜ն Խըղը՛ր, էլ իռնյ ըսկի փործանքյ չի՞ պապահե:

Խըղըըն ասայ. - Ի՞նչխ չէ: Ջբոն որ մարթ ի, մե ականջ կանի ըսա: Շահզադի խեր մեռեր ի, իռնք կէրթան կմոփանան քյաղքյին, չեն կիփե՝ ուրենց խեր մեռեր ի, խաբար կճամխեն, կասեն. «Էկեք մեր թիմավորութեն»: Շահզադի խորոխպեր կէլնի սեյրի կաքյավըմ կշինի, կճամխի Շահզադին: Ջբոն որ մարթ ի, մե ականջ կանի, թող չթողնի կաքյավ խասուշեն Շահզադին, զանի կոփրի: Խորոխպեր կփիսնա, որ էն էլ չէլավ, սեյրի կանի, ճաղյի քյարըմ մեյ մազիյ կկախի դարզյըխի փըռնիյ, որ Շահզադեն ուր կնիյն ընյնեն, ինի վերեյթեր, սպանի: Ջբոն որ մարթ ի, թող թազա դարգյախըմ փա շինել, էն դիխեն մփնեն ներս: Խորոխպեր կփիսնա, որ էն էլ չէլավ, ինքյ կփառնա սեյրի վիշաբ, կիշըրով կուզյա Շահզադին կփեղի: Ջբոն որ մարթ ի, թող էն կիշեր մոյյաթ կենա, վիշաբն սպանի, համա մոյյաթ կենա, որ էն վիշբի արընիյ իսկի չմնա: Մեչ էն էօդին որ մնայ էն արյուն, էլըմ Շահզադին կսպանի: Մեկել Ջբոն որ մե կլսի, մեզնիյ լածն հեչ մարթու չասի, խեփ ասելուն՝ կփառնա քյար:

Ֆը՜ոռ, թըռան կնուցին:

Ջբոն փառոյավ էկավ ուր փեղ պառկավ քյնավ: Առափուն պարի լխա պայվավ վեր ջաղամաթին, վեր մեր Շահզադին, Ջբոյին: Էլան վեր, ուրենց խայ-մայ կերան, չայ-կայհֆեն խման, պեռներ պառյին, ինզյան ճամբախ:

Շափ մի էկան, քիչ մի էկան, դարա-թափա, դյում-դյուզ էկան, չեօլ ու չիման փաշփերն ընյան, անվեբի-վերի սարեր ընյան, օր մ' էրկու, շապաթ մ' իրեքյ ճամբախ էկան, մեկ օր մնայ, որ խասնեն ուրենց խոր քյաղաքյ: Շահզադեն մարթըմ կընդավ, պաշխիշ իփուր, ասայ. - Շոփ կէրթաս խորս ականջկըլա կփանես, թե քյո լաճն էկավ:

Էփա մարթն կնայ ակընջկըլեն փարավ: Ամմա Շահզադի խեր մեռեր էր, խորոխպեր նսփիր էր վեր թախթին, որ լսավ՝ Շահգյալն ասայ. «Էյ վա՜խ, թախթ ծեռնես կնայ, ճարն ի՝ Շահզադին զայ անեմ, քանի չխասե փուն»:

Էլավ սեյրի կաքյավըմ շինեյ, խրիր մեչ ոսկե թափխին, ճամխեյ Շահզադի փիմայ:

Ջբոն զափամայ որ փեսավ ոսկե կաքյավ պիրիյին, ասայ. - Շահզադա, ես պիփի քիչըմ ծի խաղամ:

Ուփ ծին քշեյ կնա̈յ էն գյլոխ, էկավ էսա գյլոխ, մեկ էլ բիրդան խասավ կսւքյվուն, թուրըմ թա̈լեյ: Կաքյավ խեփ ինգյավ գյեփին, կրակի պես վառվավ:

Շահզադեն որ փեսավ կաքյավ կոփրավ, շափ պսւրկայավ վեր Ջբոյին, ասայ. - Հայվա՛ն, փյու իմ մշայն էլնես, իմ խեր զի աղյա ճամխի, փյու զանես կոփրես, ես քյե չեմ մարսըյույե:

Ջբոն ասայ. - Կուրբան, ի՞նչ էլա̈վ, մեյ կաքյավ մ' էր, քյեֆս էկավ, թուրս խաղյույի, փեպավ կաքվյուն, ինգյա̈վ կոփրավ: Էրթանք քյաղաքյ, թաքավուրույ կխընթրեմ, թող էրկու խափ էլ փա շինել:

Փարիզադեն ասայ. - Ադվորթ կասի. ի՞նչ կա որ, Ջբոյի ջան սաղ կենա, էն է՞լ պան ի, որ իրես կուփաս:

Վարհասըլ, էկան խասան վեր դարգյըլխի փըռան: Ջբոն փեսավ, որ սեյր ի արե, ճաղյի քյար մեյ մազիյ կախե փոնիյ: Ծին քշեյ, Շահզադի փիմայ, կփրեյ, ասայ. - Շահզադա, ես կաքյուլ չեմ անե, որ փյու խին դարգյըլխի փըռնիյ մփնես ներս, մենքյ էրկուսս էլ թազա փեսա ենքյ, թազա խանըմներ պիրիր ենքյ, պիփի թազա դարգյըլխի մը փյուռ փանքյ շինել, մփնենքյ ներս:

Փարիզադեն կասի.· - Ադվորթ կասի Ջբոն, փիսնանքյ ծեր մարիֆաթ, կանա՞քյ շոփըմ փյուռ փա շինել, մփնենքյ ներս:

Շահզադեն ամր արայ, ուսթեքյ ու նաջարներ էկան, մեյ սահաթվան մեչ թազա դարգյախ շինիյին, խարս-փեսեն փկեն ընցույին: Ժողովուրթ էն կանդար են իկե թամաշա, որ էլ ճար չկա, դեռ չեն իփա մեկելի փոնեն ընցնել:

Խեղճ խսւղիվորըմ ինգյիր էր մեչ մախլուխին, կճխթին դես, կճխթին դեն, ասայ. - Խո ես էլ թա̈զա փեսա չեմ, թա̈զա փոնեն էրթամ, ես էլ կէրթամ խին փըռնեն կընցընեմ:

Խեփ խասավ մեչ խին փռան, սեյրին բա̈թլավ, ճաղյի քյարն ինգյա̈վ վեր խսւլիվորուն, խեղճ էլավ փըթիր:

Վարհասըլ, ի՛նչ գյլոխ յավյույեմ, Շահզա̈դեն ու Ջբոն ուրենց խանըմնեկայ խեփ կնա̈յին ուրենց քյոշկ սարեն:

Վա̈զիր-սա̈դրա̈զա̈մ, օնիքյիլար, թա̈ջիր-բա̈զըրգյա̈ն բիթյուն մեյփեղ ժողվան, էկան Շահզա̈դին փեսության. «Պա̈րի ես իկե, խա̈զա̈ր պա̈րով, ծաղկըներով, ռուհմա խաթուն, խասմա խո փյու վեր մեր աչիչ, վեր մեր գյլխուն»: Համա չյունքի Շահզա̈դեն նոր էր իկե ուփ փուն, էլ իփոնցիյ մարթ չուզեյ ասել, թե քյո խեր մեռեր ի, քյո խորոխպեր նսփի թախթ: Շահզա̈դեն էլ չիմցա̈վ: Էփ մարթեր բոլոր էրթալույ սորա Շահզա̈դեն խեփ ուփ խանըմին ուրենց չայ-կայհֆեն խման, խսւյ-մայ կերան, պառկան, որ պիփի քյնին, Ջբոն ասայ. - Շահզա̈դա̈, փյու կիփես, որ իմ կնիյն էլ թաքավուրու մը քյոր ի, չէլնի

որ ես մկա առնեմ, էրթամ ուրիշ տեղ: Կխնթրեմ, մեյ կիշերս էլ իզին տաս, ըստեղ պառկենքյ, չյում առատըռն զի տեղըմ կընղնեմ:

Փարիզադեն ասաց. - Ի՞նչ կէլնի, տյու իմ ախպերն ես, խանըմն էլ իմ քյոր, ավատա որ չթողնեմ ուրուշ տեղ էլ էրթաք, մենք մեյտեղ ապրենք:

Ջրոն շատ ուրխըցավ, ուր տեղն էլ իսկեց, ուր կնըցյան ասաց. - Դե քյե մեռնեմ, արի պառկի, մեյ կիշերս էլ զիկ օր տուր, չյուր վա՛ղ ես քյոն եմ, տյու իմ:

Կնիկ կասի. - Օղորմի խորտ, ես զաթի նեղացուկ ի, ըռհա՛թ կքյնեմ:

Բիթյունըն էլ պառկան քյնան: Ջրոն ուր թուր քյաշեց, կայնավ տռան իտև, չյում կես կիշըրին տեսավ, որ ի՞նչ. կըչկըչոց ինցյա՛վ թավան, ահագին վիշապըմ էկավ, առքյիցմ գլոխ կախեց տակ, քիչ ի մնացե, որ Շահզա՛դին կըծի:

Ջրոն խասավ, ծեռ թա՛լեց վիշաքի վիզ պռնեց, քյա՛շեց օդի օրթատեղ, առեց թուրն, ինցյա՛վ վերեն, զա՛ր որ կզանեց. խորոտըմ պըքտեց, արաց կիմա, փա՛թյութեց մեչ ջլին, տարավ լցեց փողան: Տա՛ռցավ ետ եկավ, ճյուրը առեց ծեռ, ինցյա՛վ մեչ օդին, մեյ մեկ աչքեց, որտեղ որ վիշաքի արուն թըռիր էր, պորեց իխան: Մեկել տեսավ, որ մեյ պուտ արուն թըռեր ի վեր Շահզադի իրիսին, ասաց. «Տեր աստված, էլ ի՞նչխ անեմ, ծեն տամ, ես կիտեմ՝ չթողնի ուր իրես կտրիմ. քյնուկ տեղ կտրի՞մ, վայ թե վախենա. ինչ էլ որ էլնի՝ պիտի կտրեմ»:

Ծեռ կթալի, իրես կպըռնի, ուսթուրեն կթալի կկտրի:

Շահզա՛դեն ցավից քյնու մեչեն կթըռնի վեր, ծեռ կուտա ուր իրես, կտիսնա արուն: Կըռռա, կասի. - Վա՛յ, քյոփօղլի Ջրո, ես չե՞մ կիտե մանըցյա՛ք, որ քյո աչք իմ կնիյն ի, կուզես զիկ ըսպանես, որ իմ կնի՞յն առնես:

Փարիզադեն կաքթըննա, կիրիսնա իրկան արուն, կասի. - Ջրո՛, թե ես քյե ասի, տյու իմ ախպերն ես. էսա ի՞նչ օյին էր խանիցիր մեր գլոխ:

Ջրոն նաչար կմնա, կասի. - Վա՛զն էկեք կասեմ, ամա կփոշմըննեքյ:

Ջրոյի կնիկ էն դիխեն կասի. - Չե՞ս ամչընա, զիկ խապիցիր պիրիր, խերիքյ չի, աչք տընըցյիր ես խըլըի իրե՞ս:

Ջրոյի ճար կկընղնի, կնստի էօդի մեչտեղ, կասի. - Շահզադա, էն քյո՞ մարիֆաթն էր, որ էն խա՛րա՛րմ տան մեչ քյներ ինքյ, թե ես կիշըրով քյառոսուն դեն իհան թա՛փա՛ցյոզ պառավն սպանիցի:

Կէլնի քյառոսուն դնու ակընջներ որ պիրիր էր խեստ ուր, կպիրի կլցի էնտեղ:

Շահզադեն որ կտիսնա, կասի. - Էլ մի՛ ասե, ես ավատպացի:

Ջբոն որ չյուր ծինզյվեր տարցիր էր քյար, կասի. - Էլ ի՞նչ չասեմ, ապա ըռնցյ խե՞տն ինչխ անեմ, - կասի, - Շահզադա, էն քյռ մարիֆաթն էր, որ մարմար քյարի տկեն գյամեր պիրիցի, զարկեցի ծով, խեծար ծիյանքյ ընցար, էն վռ՞վ կաներ, որ ես իմ բեղեր թրաշեցի, էլա̈ կնիկ, կնացի չյում Բա̈ղդա̈դու քյաղաքյ: Բսղքյի բախտս չպիրեք, եփ չտառնի: Էն քյռ՞ մարիֆաթն էր, էն կաքյավ որ կռտրիցի, կրայն ինգյավ, վառվավ: Դռղրին կուզես, խերտ մեռեր ի, խորոխպերտ ի նստե տեղ. որ խորոխպեբտ լսավ քյռ գյա̈լ, կիտցավ որ ուր թաքավորութեն ուր ծեռնեն պիտի էրթա̈, տյու պիտի էլնիս թաքավոր քյռ խոր տեղ, սեյրի արաց՝ էն կաքյավ ճամխեց քյռ տիմաց, որ տյու ծեռ տիր, վա̈ռվիր:

Շահզա̈դեն ասաց. - Ամա՛ն, Ջբո, խերիքյ ասես, ավատպացի:

Ջբոն չյում մեչք տա̈ռցիր էր քյար, ասաց. - Էլ ի՞նչ ֆա̈յդա̈ կանի, ասիր եմ՝ պիտի ասեմ, ես տեսակ կես քյար մնա՞լ ինչ կածի:

Ջբոն ասաց. - Էն քյռ՞ մարիֆաթն էր, որ խորոխպերտ սեյրի էր արե՝ ճաղցի քյար մեյ մազից կախիր էր դա̈րգյըլխի տըռնից, որ մտնիր ներս, քյաբ իներ վեր գյլխուտ՝ մեռնիր: Ես պիրիցի թա̈զա̈ տյոււռ տվլի շինել, ընցանք ներս, խեղճ խապիվոր մենակ էն տռնից կնա̈ց, սեյրին բա̈թլավ, քյարն ինգյա̈վ վերեն, սպանեց:

Ջբոն ասաց. - Էն իրեստ կտրիլտ էլ պատճառ էն ի, որ խորոխպերտ տւառցեր էր սեյրի վիշաբ, կես կիշըրին էկավ, որ քյե կծեր, մեռնիր: Ես մույաթ մնացի չյում վիշաբի գյալ, վիշաբն սպանիցի. չես ավատա, վիշբի ջա̈նդա̈կ լցիր եմ վռղան, կնա՛ տիսի: Սորա ճրայն առի, էօղի մեչ ինչ կանդար որ վիշաբի արուն էր թըռե, մեկիկ-մեկիկ արընի տեղրանքյ կտրիցի, խանեցի: Տես ջյռւլ-խալին բիթյուն կըտըռտուկ ի, մեյ պուտ էլ արուն թըռիր էր վեր քյռ իրիսին: Տեսա, որ էրթա̈լով կճռչանա, քյե ծեն տի, պիտի չթողնիբ կտրի, ինոր խամար առանց ծեն խանելու կտրիցի: Տյուն էլ էլար եսա օյին պիրիր իմ գյլոխ:

Ասավ պըռծավ, էլա̈վ կտորըմ քյար, կլորվավ էնտեղ:

Շահզադեն, ուր կնիկ, Ջբոյի կնիկ յոթն օր, յոթ կիշեր նստան վեր Ջբոյին, լացին, սորա էլա̈ն Ջբոյի քյարն վերուցին, օդի մեչ մեյ պուճախ տեղ շինիցին, կայնըցուցին էնտեղ, զմեն իրիկուն Ջբոյի կնիկ ինան Շահզա̈դի կնիկ սահա̈թներով պիտի չոքյին Ջբոյի առաճ, լին, մըռմըռին:

Վարհասըլի, ի՞նչ գյլոխ ցավցուցեմ, ինոնց օրով ամսըներով կընցնի, մեր խոսքով ի, ըտըսկնա̈ մնացին չյում տարին թըմըմավ. աստված Շահզադին լաճ մի իտուր, անուն դրին Ջբո:

Թաքավուրու լաճ որ տեսավ էլ ճար չկա, խետ խանըմնեկաց

հըմեն օր պիտի լա՛ն, մըռմըռան, ինքյն ուր կնիկ նստեն մեյտեղ, Ջբոյի կնիկ վիզ կքյեթրի, ինոնց թամաշա կանի:

Շահզադեն ասաց. - Ախտ էլնի վեր իմ ջանին, պիտի ինեմ պյունյեն ման գյամ, էլ իսա տուն խարամի կուցե իմ վերեն, չյում Ջբոյի դարման չկընդնեմ, չսաղացուցեմ, չըռհաթեմ:

Շահզադեն էլավ ուր ճամխի պաշար վերուց, ուր ծին խեծավ, թուր կապեց, ինգյավ ճամբախ: Շաբըմ ֆըռաց, քիշըմ ֆըռուց, օրմ' էրկու, շապաթմ' իրեքյ, ամիսըմ չորս, պյունյեն կան էկավ: Մեկ իրիկուն նստավ, շատ մտածեց, ասաց. «Վալլա՜հ, կա-չկա, Ջբոն էն մարիֆաթներ սովրիր էր, էն տաշտի մեչի խմրմբմ տնիկաց էր լսե»: Էլավ խեծավ ուր ծին, յալյահ բաքամ, կնաց խասավ էն տներ, ուր ծին կապեց, ինքյ թուր չլտեց, կայնավ վեր տռան, չյում կես կիշըրին, մեկել լսավ կամշընեկաց մեչ խշխշոց կա:

Շահզադեն վախեցավ, ասաց. «Վալլահ, գյողերն էկան, զի կսպանեն, բարե յավաշըմ էրթամ կամշընեկաց մեչ պախկըվեմ, բալքյի զի չտիսնան»: Էլավ ուշիկ-ուշիկ կնաց մեչ կամշընեկաց, տիսավ որ ի՞նչ. էրկու խավքյ են:

Շահզադեն նստավ էնտեղ, թամաշա արաց:

Նաբին ասաց. - Խըղըր, էս ի՞նչ մարթ ի ըստեղ:

Խըղըրն ասաց. - Թեռ՜, քյո տուն ավեր չանի, էսա Կանդահարա Շահզադեն ի, որ կնուց Հընդըյամմանա թաքավորու ախչիյն առեց, որ մենքյ պատմիցինքյ հմեն Ջբոյին, ասիցինքյ, որ մարթու չասի, չէլնի քյար տառնա: Շահզադի խեր որ մեռիր էր, խորոխպերն էր նստե տեղ: Էտա սեյրիքյ որ արիր էր, Ջբոն տիմացն առիր էր, վերճեն Շահզադի խորոխպեր տառցիր էր վիշաբ, որ Շահզադին կծեր, մեռուցեր: Ջբոն վիշաբ ըսպանեց, տեսավ որ մեյ պուտ արուն էլ թռե վեր Շաեզադի իրիսին, էն արուն էլ սուրով կպորի, կխանի: Շաեզադի իրես, որ կմըռմըռա, էն կանդար կզոռեն վեր Ջբոյին, չյում Ջբոյի ճար կկտրի, ուր գյլխու գյացած կպատմի, կտառնա քյար: Մկա Շահզադեն ինգյե պյունյեն կան կուգյա, մկա էլ իկե ըստեղ, որ Ջբոյին ճար անի:

Նաբին կասի. - Խըղը՛ր, վա՜խ, ապա Ջբոն տառցե քյա՞ր, էլ ճար չէլնի՞:

Խըղըր կասի. - Ի՞նչխ չէլնի, թե Շահզադեն մարթ ի, մե ականջ կանի, Ջբոյին շատ կսիրի, կուզի որ Ջբոն սաղանա, ուր մեյ խատ լաճմ' էլե, անուն Ջբո, Շահզադեն որ մե ականջ կանի, առատուն կտառնա եռ, Ջբոյի քյար աղեկըմ կլվա, կտնի մեչ թաշտին, ուր տղեն կպիրի, վեր Ջբոյի քյարին կմորթի, Ջբոն կսաղանա, կէլնի էլըմ դաղվան:

Ֆըռռաղեն խավքյեր թըռան:

Շահզադեն էլ չդադրավ էն տեղ, համան էլավ, ուր ծին խեծավ, ինգյավ ճամբախ: Շատ մ' էկավ, քիչ մ՛ էկավ, չյում խասավ ուր տուն: Տեսավ որ երկու խանըմներ Ջբոյի քյար տրիր են մեչտեղ, էլմել կուլան:

Շահզադեն ասաց. - Խանըմներ, խերիքյ ի լաքյ, էլեքյ էբկուստ մեյտեղ մեյ խատ կնուցեքյ մեր խաս բախչեն ֆըռացեքյ, սըռտկըներտ պայվի: Աստված օղորմած ի, մառախ մեքյ անե, ճարըմ կէլնի:

Խանըմներ կնացին խաս բախչեն ֆըռալու: Շահզադեն շոտըմ կէլնի, թաշտ կպիրի, Ջբոյի քյար կտնի մեչ թաշտին, սապոնով աղեկըմ կլվա, սռրա կպիրի ուր տղեն ուրուրոցից կխանի, կտնի վեր Ջբոյի քյարին, տղի վիզ կկտրի, շոտ էլըմ կկըպուցի ուր տեղ տնի, ուրուրոց կկապի:

Տղի արուն որ կթափի վեր Ջբոյի քյարին, Ջբոն կփըռըյտա, կթռնի կնստի, կասի. - Օ՜խ, ինչ անուշ ի քյնե, ինչի՞ զի ծեն տվիքյ:

Շահզադեն կասի. - Տընավե՛ր, ի՞նչ քյուն, տյու քյար իր տառցե, ի՞նչ հալով քյե սաղացուցի:

Շահզադեն ինան Ջբոն կփաթուցվեն մեյ մեկու, ուբախութենե մեյ-մեկ կլիզեն, մեկել բիրդան փարիզադեն ու Ջբոյի կնիկ կմտնեն ներս, կտիսնան, որ Ջբոն սաղացեր ի, էլ ուրախութնի չափ չկա:

Փարիզադեն կասի. - Շահզադա, պիտի ասես, ի՞նչխ արիր, որ Ջբոն սաղացավ: Աստծու սիրուն, ասա՛, մեկել անենք, չէլնի էլմ' էլ տառնա քյար:

Շահզադեն կասի. - Փարիզադա, ինչ քյեզնից պախեմ, ի՞նչ աստծուց քյո տղեն պիբի վեր Ջբոյի քյարին մորթիցի, արուն կնաց վեր Ջբոյին, Ջբոն սաղացավ:

Փարիզադեն կասի. - Շատ բեբախտ մարթ ես, Ջբոն մենակ քյե չէր արե աղեկութեն, ինչ որ արիր էր՝ զիկ էր արե: Թող զիկ ասիր, ես էլ գյի, իմ տըղի ոտքեր պըռնի, որ չխչըխչըխփվեր արուն, երթեբ դեն-դեն, կայիմ կզուֆթի, արուն թամամ կթափեր վեր Ջբոյի քյարին, Ջբոյի առճի կուվաթ տեղն կէլներ:

Աստված տեսավ որ երկըսի սիրտն էլ դողրի էր դեխ Ջբոն, էլմ'էլ տղին կյանքյ իտուր: Տղեն մեչ ուրուրոցին իլաց, էլա՞ն վազիցին, տղեն ուրուրոցից խանիցին, էլմ'էլ ուրախութնին չափ-սահման չկեր:

Շատ ուրախցան, նոր պիրին թագադան յոթն օր, յոթ կիշեր Ջբոյի խաբսնիս արիցին:

Շահզադեն նստավ վեր թախթին, էլավ թաքավոր, Ջբոն արաց ուր վազիր, խասան ուրենց մուրազին, տուքյ էլ խասնեքյ ծեր մուրազին:

Էբկնուց իրեքյ խատ խընձոր ինգյավ. մեկ՝ ասողին, մեկ՝ դինդըրմիշ արողին, մեկ էլ զիկ: